«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 5-ի N 449-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2021 թվականի N –Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի N 449-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին ճանաչելու մասին» N 449-Ն որոշման՝

- 1-ին կետի 1-ին ենթակետում «սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «միասնական սոցիալական» բառերով.
- 1-ին կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) միջազգային կազմակերպությունների վարձու աշխատողների համար անձնավորված հաշվարկը սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու կամ չներկայացնելու, հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված տույժը, 402-րդ հոդվածով սահմանված տուգանքը, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169^1-րդ, 169^2-րդ, 169^8-րդ և 170^3-րդ հոդվածներով սահմանված տուգանքները չեն կիրառվում.».

- 1-ին կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) միջազգային կազմակերպությունների կատարած կենսաթոշակային և սոցիալական վճարների գումարները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված միասնական հաշվին՝ վճարման հանձնարարականում նշելով այն ՀՎՀՀ-ն, որը հատկացվել է ծառայությանը տվյալ միջազգային կազմակերպության վարձու աշխատողների համար գրանցման հայտ և անձնավորված հաշվարկ ներկայացնելու համար.».

- 1-ին կետի 7-րդ ենթակետը, 2-րդ կետը, ինչպես նաև 3-րդ կետի 2-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած.
- 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

«3) միջազգային կազմակերպության վարձու աշխատողի համար առաջին անգամ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված գրանցման հայտը և անձնավորված հաշվարկը ներկայացնելու համար դիմել պետական եկամուտների կոմիտե՝ տվյալ միջազգային կազմակերպությանը, որպես գործատու, հաշվառելու, ծառայությանը համապատասխան հաշվառման համար, մուտքի անուն և գաղտնաբառ հատկացնելու համար։».

- 4-րդ կետից հանել «պետական» բառերը.
- 4-րդ կետը 1-ին ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետով.

«1.1) սույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դիմումը ծառայությունից ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ծառայությանը հատկացնել հաշվառման համար, մուտքի անուն և գաղտնաբառ.».

- 4-րդ կետի 2-րդ ենթակետը «հասանելի դարձնել» բառերից հետո լրացնել «միջազգային կազմակերպության վարձու աշխատողների» բառերով.
- 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին կետ.

«4.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ ապահովել միջազգային կազմակերպությունների կողմից կատարված յուրաքանչյուր փոխանցումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկատվության տրամադրումը Ծառայությանը, նշելով վճարողի անվանումը, ՀՎՀՀ-ն, ստացման ամսաթիվը, նպատակը և գումարը՝ արտարժույթով և ՀՀ դրամով։»։

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 1 ամսվա ընթացքում ապահովել «Պետական կենսաթոշակների մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքների, իսկ դրանից հետո՝ նշված օրենքներում կատարված փոփոխությունների ռուսերեն թարգմանությունը և դրանց հրապատակումը նախարարության կողմից վարվող նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում։
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։